«Հանքավայրերը հայտնաբերում են երկրաբանները, ուստի կարելի է ասել, որ հանքաբանությունը սկսվում է երկրաբանությունից». Արման Վարդանյան

» 04

ԶՊՄԿ-ն մասնակցել է «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ին՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին:

» 08

Աշխարհի առաջատար ընկերությունների օրինակին հետևելով. 2023-ից մեկնարկած համատեղ դոնորական արյունատվական ծրագիրը շարունակվում է

» 11

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
press@zcmc.am

№44 • 2024թ.

Հանքարդյունաբերությունը հուսալի ձեռքերում է...

Շնորհավո՛ր երեխաների պաշտպանության միջազգային օրը, թո՛ղ նրանք անհոգ ու խաղաղ մանկություն ունենան ու ապագայում շարունակեն իրենց ծնողների շնորհակալ գործը:

1 ՀՈՒՆԻՍԻ
Երեխաների պաշտպանության միջազգային օր

Կառուցելով կամուրջներ

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, ԶՊՄԿ տարբեր արտադրամասեր էին այցելել

աշխատակիցների երեխաները, ընկերության նախակրթարանի սաները: Խանդավառված հետաքրքրությամբ երեխաներն ուսումնասիրում էին անծանոթ միջավայրը, մեծերի աշխարհը՝ փոքրերի աչքերով: Վաղվա քիմիկոսը, ինժեներն ու մեխանիկը, խոհարարն ու վարորդը, լեռնագործը ծանոթացան իրենց վաղվա աշխատավայրի պայմաններին:

2024 թ. 1-ին եռամսյակի արդյունքներով, ԶՊՄԿ-ն մոտ 140 մլն դրամով ավելացրել է հարկային մուտքերը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ

2024թ. 1-ին եռամսյակի տվյալով, ԶՊՄԿ-ն մոտ 140 միլիոն դրամով ավելացրել է հարկային մուտքերը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2024 թ. հունվար-մարտ ժամանակահատվածում Ընկերությունը վճարել է 15 մլրդ 626 մլն 783 հազար դրամ հարկ: Այս ցուցանիշով ԶՊՄԿ-ն 1000 խոշոր հարկատուների ցուցակում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը: Հիշեցնենք, որ վերջին երեք տարիներին՝ տարեկան ամփոփ ցուցանիշով, ԶՊՄԿ-ն զբաղեցրել է երկրի առաջին հարկատուի դիրքը:

Ի դեպ, կարող ենք արդեն այսօր վստահաբար կանխատեսել, որ հաջորդ եռամսյակում մեր վճարած հարկերը մի քանի անգամ կգերազանցեն առաջին եռամսյակի հարկերը: Բանն այն է, որ առաջին եռամսյակում չեն արտացոլվում տարեկան հաշվետվությունները, որոնք, ըստ հարկային օրենսգրքի, ներկայացվում են ապրիլին, և տարեկան վճարների մեծ մասը՝ ռոյալթիի և շահութահարկի մասով, արվում է այդ ամսին: Այսպես՝ միայն ապրիլին ԶՊՄԿ-ն վճարել է մոտ 30 միլիարդ դրամի հարկ: Բայց սա արդեն կարտացոլվի հաջորդ եռամսյակում:

Մինչ այդ՝ կից աղյուսակում ներկայացված է ԶՊՄԿ-ի վերջին 10 տարվա միայն 1-ին եռամսյակներում վճարած հարկերի դինամիկան:



«Հանքավայրերը հայտնաբերում են երկրաբանները, ուստի կարելի է ասել, որ հանքաբանությունը սկսվում է երկրաբանությունից». ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՄԿ տեխնիկական տնօրեն Արման Վարդանյանի հետ զրուցել ենք տեխնիկական տնօրենի գործառույթների, երկրաբանի մասնագիտության և երկրաբանության մասին:

Երկրաբանների տոնը հաստատվել է 1966 թ. և որոշվել է նշել ապրիլի առաջին կիրակին այն պատճառով, որ դրանից հետո սկսվում է դաշտային աշխատանքների նախապատրաստական փուլը: Սակայն Քաջարանի հանքավայրի տարածքում հետախուզական աշխատանքներն իրականացվում են կլոր տարի:

Հայրս երկրաբան է, և ես՝ դեռ մանկուց տեսել եմ երկրաբանի աշխատանքը: Սակայն երկրաբանությունը որպես մասնագիտություն ընտրել եմ պատահականորեն, ինչի համար, սակայն, հետագայում չեմ զղջացել:

Երկրաբանի համար ամենահետաքրքիր ու սիրելի պահը դաշտային աշխատանքներն են: Ամենասիրելի սեզոնը՝ երբ ստիպված են լինում գրասենյակներում անցկացնել:

Սպասված պահը, երբ հայտնաբերվում են օգտակար հանածոների կուտակումներ, երևակումներ կամ, որ ավելի լավ է՝ հանքավայրեր:

Մասնագիտության բերումով, երկրաբաններն իրենց կյանքի մեծ մասն անցկացնում են բնության մեջ: Նրանք, առանց բացառության, բնասեր մարդիկ են և այն թյուր կարծիքը, որ հանքավայրեր են հայտնաբերում, ուրեմն՝ բնությունը քանդում են՝ ոչ թե սիրում, հերքում է յուրաքանչյուր երկրաբան:

Քաջարանի հանքավայրի ընդերքում առկա մետաղները հայտնաբերված են, վերջին անգամ պաշարները հաստատվել են 2023 թվականի հուլիսին:

Քաջարանի հանքավայրի պաշարների ընդհանուր քանակը 2 մլրդ տոննայից ավելի է, հիմնական մետաղները պղինձը և մոլիբդենն են, կան մոտ 6 մլն տոննա պղնձի և 850,000 տոննա մոլիբդենի պաշարներ:

Պղնձի պաշարների առումով, մերը այնքան էլ մեծ հանքավայր չէ, հաստատված է աշխարհի պղնձի պաշարների 0.5-0.6 %-ը, իսկ մոլիբդենի առումով, աշխարհի հաստատված պաշարների մոտ 5 %-ը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային ունեցել է երկրագիտական նմուշների թանգարան, բոլոր ցուցանմուշները մի քանի տարի առաջ փաթեթավորել ենք, փաստագրել և հիմա դրանք պահեստավորված են: Դրանք հետաքրքիր ու ինֆորմատիվ են և առաջիկայում պլանավորում ենք կազմակերպել նոր ցուցադրություն: Թանգարանում ներառված էր հանքավայրի ամբողջ երկրաբանական պատմությունը: Այնտեղ, բացի ցուցանմուշներից, տարբեր քարտեզներ, սխեմաներ ևս կային:

ՀՀ-ում ԳԱԱ կառուցվածքում կա երկրաբանական թանգարան, նպատակ ունենք համագործակցել՝ մեր թանգարանը վերագործարկելու ժամանակ:

Նաև կարևոր ծրագրերից է՝ ամռանը մարզի դպրոցականների, ավագ դասարանների աշակերտների համար երկրաբանական ճամբարների կազմակերպումը: Մասնակիցները կծանոթանան երկրաբանի մասնագիտությանը, որոշները՝ կընտրեն այն: Բացի այդ, այս տարի ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետի ուսանողների ուսումնական պրակտիկան նախատեսում ենք կազմակերպել Սյունիքի մարզում: Հիմնական նպատակը՝ ավելի մեծ թվով ուսանողներ բերելն է Սյունիք, հաշվի առնելով՝ այստեղ

Եթե վերածենք տարիների, ապա դեռ 90 տարիներ կշահագործվի հանքավայրը, հնարավոր է՝ լրահետախուզման աշխատանքների արդյունքում թվերը ճշգրտվեն:

առկա հանքարդյունաբերական ձեռնարկությունները:
Միջազգային ստանդարտները ինքնանպատակ չեն, դրանք ստեղծվել են միջազգային լավագույն փորձերի արդյունքում, որոնց հետևելը ճիշտ է և ռացիոնալ: Մենք պահպանում ենք ՀՀ-ում գործող ստանդարտները և զուգահեռաբար քայլեր ենք անում միջազգային ստանդարտներին համապատասխանելու համար:
Օրինակ, հանքավայրի պաշարների գնահատումը կատարված է ՀՀ-ում գործող պահանջներին համապատասխան, բայց հաշվարկել և հաստատել ենք նաև միջազգային 41103 ստանդարտով:
Պոչամբարների վերաբերյալ գործող պահանջներ կան ՀՀ-ում, կիրառվում են 2022 թվականի վերջից, բայց այժմ իրականացնում ենք վերանախագծման աշխատանքներ, որպեսզի պոչամբարները համապատասխանեցնենք միջազգային ստանդարտներին:
Շուտով կստանանք ISO կառավարման սերտիֆիկատ՝ լաբորատորիայի համար, որը որպես պահանջ դրված չէ արդյունահանող ընկերությունների առջև, բայց, այնուամենայնիվ, մենք գնում ենք դրան, հասել ենք վերջնական փուլի:
Մետաղների հաշվարկման, բալանսների կազմման ուղղությամբ ևս սկսել ենք աշխատանքներ՝ միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար:
Շահագործումը սկսելուց մինչ օրս

ԱՐՏԱՀԱՆՎԵԼ Է
450,000,000
ՏՈՆՆԱ ՀԱՆՔԱՔԱՐ



Քաջարանի հանքավայրից արդյունահանվել է մոտավորապես 450 մլն տոննա հանքաքար, 2 մլրդ տոննայից ավելի հանքաքար դեռ կա, այսինքն՝ ընդհանուր առմամբ, 2.5 մլրդ տոննա հանքաքարի պաշարներ են եղել:
Եթե վերածենք տարիների, ապա ևս 90 տարի կշահագործվի հանքավայրը, հնարավոր է՝ լրահետախուզման աշխատանքների արդյունքում, թվերը ճշգրտվեն:
Քաջարանի հանքավայրի շուրջը՝ որոշ հեռավորության վրա, արդեն կան հայտնաբերված հանքավայրեր, մասնավորապես՝ ոսկի և ոսկի-բազմամետաղային:

«Տեխնիկական տնօրենը ղեկավարում և առաջնորդում է արտադրական պրոցեսի տեխնիկական ծառայությունները. երկրաբանական, պլանավորման և վերահսկման, ջրային ռեսուրսների կառավարում ու հիդրոտեխնիկական կառույցների ծառայությունները և լաբորատորիաներ:
Երկրաբանների ներգրավմամբ երկու ծառայություն կա. հանքային երկրաբանների բաժինն է, ովքեր զբաղվում են ապրանքային հանքաքարի որակի վերահսկմամբ, այսինքն՝ նրանք են վերահսկում նախապես պլանավորած հանքաքարի որակն ու մատակարարումը հարստացուցիչ ֆաբրիկա: Հիմնականում իրենց գործունեությունը կապված է արտադրության հետ:
Ունենք նաև երկրաբանահետախուզական ծառայություն, որը զբաղվում է հետախուզման, լրահետախուզման աշխատանքներով: Արդյունքն ազդում է արտադրության վրա՝ մեծ հեռանկարով, մի քանի տարվա կտրվածքով: Իսկ հանքային երկրաբանները անմիջապես ամենօրյա աշխատանքով են կապված արտադրության հետ», – մանրամասնում է Ա. Վարդանյանը:
Հանրապետությունում երկրաբանի տոնը պատշաճ նշվում է, ինչը գովելի է, գնալով ավելի կարևորվում է մասնագիտությունը, հուսանք տարեցտարի տեսանելի կլինի նաև դիմորդների աճը:
Հաշվի առնելով՝ մետաղների պահանջարկի աճը և արդեն հաստատված պաշարների նվազման միտումը, կարող ենք միանշանակ ասել, որ երկրաբանի մասնագիտության պահանջարկը գնալով աճելու է, և ավելի մեծ մարտահրավերներ են լինելու՝ նոր հանքավայրերի հայտնաբերման առումով:

Լիլիթ Իսրայելյան

Հսկա ինքնաթափերը նրանց հասկանում են կես շարժումից

ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

90 տոննա բեռնատարողությամբ ԲելԱԶ մակնիշի ինքնաթափի օպերատոր

Մեկ ամիս է, ինչ աշխատում է տեխնոլոգիական ավտոհավաքակայանում՝ ոլորտի նորեկներից է, բայց նորեկ չէ կոմբինատում:

– Հսկաներ են, – պատմում է ինքնաթափերի մասին,– **սակայն դժվար չէ շահագործել, կամ՝ որ ամենակարևորն է՝ ցանկություն ու կամք է պետք: Իմ պարագայում կտրուկ փոփոխություն եղավ՝ էներգետիկական ոլորտից՝ ավտոինքնաթափի վարորդ:**

Կոլեկտիվը համերաշխ է, ընտելանալու խնդիր էլ չեմ ունեցել: Գործընկերներս հիմնականում հմուտ վարորդներ են, ովքեր պատրաստակամ են իրենց փորձն ու վարպետությունը փոխանցել: Իսկ դա էլ նպաստում է, որ առավելագույն ներդրումով կատարես աշխատանքդ՝ զգոնություն դրսևորելով:

ԱՐՄԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

Caterpillar մակնիշի 130 տոննա բեռնատարողությամբ ավտոինքնաթափի օպերատոր

Արմեն Արշակյանը 22 տարի առաջ Գորիսից Քաջարան է եկել աշխատանք գտնելու նպատակով:

Այս տարիների ընթացքում 40 տոննա ինքնաթափից մինչև 130 տոննա բեռնատարողությամբ ինքնաթափեր է վարել. 40, 55, 90 ապա՝ 130 տոննա: Հիշում է տեխնիկայի էվոլյուցիան և այն ոգևորությունը, որ պատում էր իրեն և գործընկերներին՝ նոր ինքնաթափերի ղեկին նստելու ժամանակ:

– Դե, ժամանակակից հանքային տեխնիկան առավել հարմար է շահագործել, հեշտ է կառավարվում, դրան զուգահեռ սակայն աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունդ չի նվազում: Անընդհատ զգոնությունն ու անվտանգության կանոնների պահպանումը պարտադիր պայման է:

– Կոլեկտիվում փորձառու վարպետներ շատ կան, ովքեր անկախ եղանակային պայմաններից անթերի են վարում, այնքան են հմտացել, որ հսկա ինքնաթափերն իրենց հասկանում են կես շարժումից: Վերջիններս էլ՝ շփման իրենց լեզուն ունեն:

Փորձառու վարպետը երկար տարիներ ղեկին է, ասում է՝ կարևոր գործ է անում թե իր, թե երկրի համար: Իսկ հաստատուն վաստակն ու վաղվա օրվա հանդեպ վստահությունը ստիպում են նվիրվել, օրինակ ծառայել նորեկներին, փորձառության խորհուրդներ տալ:

Լիլիթ Իսրայելյան

Վարժանքներ՝ հետևանքները բացառելու նպատակով

Փրկարարների հետ համագործակցելով, վարժանքների ընթացքում, կոմբինատի աշխատանքային խմբերը վերացրին պոչատարի վթարը՝ կանխելով շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասները:
Այս սցենարով «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ մայիսի 16-ին իրականացրեց հերթական հատուկ տակտիկական ուսումնավարժանք: Առաջադրված խնդիրն ամբողջությամբ և լիարժեք կատարվեց սահմանված ժամկետում:

Liebherr R 9800

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՆՔԱՅԻՆ ԷՔՍԿԱՎԱՏՈՐԸ

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ ՕՐ ԿՈԴԸ՝ ԻՄԱՑԻՐ ԱՎԵԼԻՆ:

- Երկարությունը՝ 23,9 մ
- Լայնությունը՝ 10,5 մ
- Բարձրությունը՝ 11,7 մ
- Աշխատանքային քաշը՝ 800 տ
- Ծարժիչների քանակը՝ 2
- Ընդհանուր հզորությունը՝ 4000 ձիաուժ
- Բաքի ծավալը՝ 17500 լ
- Առավելագույն արագությունը՝ 2,6 կմ/ժ
- Ծերեփի տարողությունը՝ 45 մ³
- Բարձրացնող հզորությունը՝ 150 տ
- Թիակի աշխատանքային երկարությունը՝ 9 մ

ԶՊՄԿ-ն մասնակցել է «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ին

Երևանի պետական համալսարանում կայացավ «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ը՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 105-ամյակին:

Միջոցառումը մեկ հարկի տակ հավաքել էր դիմորդների, ուսանողների, շրջանավարտների, համալսարանական ստորաբաժանումների և գործատուների: Էքսպոյի շրջանակներում դիմորդները հնարավորություն ունեցան ծանոթանալու մրցունակ կրթական ծրագրերին, ուսանողները՝ հանդիպելու իրենց ապագա գործատուներին, իսկ գործատուները՝ ներկայացնելու իրենց գործունեությունը և ընձեռած աշխատանքային հնարավորությունները:

Հայաստանյան ավելի քան 45 կազմակերպություն՝ բանկային, կապի, սպասարկման, արտադրական, կրիպտոարժույթների, արդյունաբերական, միջազգային զարգացման, պետական, մշակութային, գիտահետազոտական ոլորտներից, այցելուներին ներկայացրեցին առկա աշխատանքային հնարավորությունները: Մասնակիցների թվում էր նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը էքս-

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը էքսպոյին ներկայացել էր իր տաղավարով

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR ԿՈԴԸ՝ ԻՄԱՑԻՐ ԱՎԵԼԻՆ:

պոյին ներկայացել էր իր առանձին տաղավարով: ԶՊՄԿ-ի տաղավարում այցելուներին ներկայացվեց ընկերության պատմությունը, աշխատակիցների մասնագիտական ուղղությունների վերաբերյալ որոշակի տվյալներ, ինչպես նաև աշխարհի առաջատար հանքարդյունահանող երկրների մասին ոլորտային տեղեկատվություն: Բացի այդ՝ տաղավարի այցելուների համար անցկացվեց խաղարկություն, և, պատահականության սկզբունքով, ընտրված հաղթողները ստացան գրախանութի նվեր-քարտեր:

«ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2024»-ի շրջանակներում կայացավ նաև «Բանախոսություններ գործի մասին» խորագրով կոնֆերանսը, որի ընթացքում տարբեր ոլորտների անվանի և հաջողության հասած անհատներ ներկայացրեցին թեմատիկ զեկույցներ:

Կոնֆերանսի խոսնակներից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանն իր ելույթում նշեց՝ հանքարդյունաբերությունն ավանդաբար Հայաստանի ուժեղ կողմերից մեկն է եղել, որ Հայաստանի հանքարդյունաբերական ձեռնարկություններից մի քանիսը ոչ թե տասնամյակների, այլ հարյուրամյակների պատմություն ունեն՝ շեշտելով, որ այս ոլորտը մինչ այսօր ապահովում է Հայաստանի արտահանման և բյուջեի մուտքերի առյուծի բաժինը:

Վարդան Ջհանյանը խոսեց ոլորտի շուրջ միֆերի մասին, մասնավորապես, որ հակառակ տարածված կարծիքի, հանքարդյունաբերության ոլորտում բանվորականը աշխատուժի միայն մի մասն է: *«ԶՊՄԿ-ում աշխատուժի 50 տոկոսը բարձրագույն կրթություն ունի: Ոլորտը գիտահեն է և այստեղ ներգրավված են բազմաթիվ մասնագիտություններ՝ ինժեներներ, երկրաբաններ, մետալուրգներ, քիմիկոսներ, ֆինանսիստներ, իրավաբաններ և այլն»*, – նշեց նա:

ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալն այցելեց նաև ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի տաղավար, խոսեց հանքարդյունաբերության ոլորտի մասնագիտությունների կարևորության մասին, ուսանողներին հրավիրեց այցելել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, ծանոթանալ երկրի առաջին հարկատուի աշխատանքներին:

Հենրիխ Մարգարյան

Եռամսյա դասընթացների ավարտից և քննությունների հաջող հանձնումից հետո մասնագետներին շնորհվեցին համապատասխան հավաստագրեր:

Նոր մասնագիտություն, նոր հնարավորություններ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն իր գործընկեր Craft excellence ուսումնական կենտրոնի հետ, տարածաշրջանից հավաքագրել, կազմակերպել է խառատների, էլեկտրիկների և զոդողների տեսական և գործնական դասընթացներ:

Ընկերության նպատակն էր՝ երիտասարդ մասնագետներ պատրաստել, ովքեր հիմնովին պատրաստ կլինեն ներդնել իրենց գիտելիքներն աշխատանքում:

Մայիսի 22-ին, եռամսյա դասընթացների ավարտից և քննությունների հաջող հանձնումից հետո մասնագետներին շնորհվեցին համապատասխան հավաստագրեր:

Որակավորում ունեցող 40-ից ավելի աշխատակիցները կլրացնեն աշխատաշուկայի պահանջարկը և իրենց հմտություններով կնպաստեն մարզի մասնագիտական հիմնարկների առաջխաղացմանը:

Շնորհավորում ենք շահառուներին և մաղթում մասնագիտական ձեռքբերումներ, իսկ նրանց ապագա գործատուներին բիզնես հաջողություններ և կայուն զարգացում:

Աշխարհի առաջատար ընկերությունների օրինակին հետևելով

2023 թվականից Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը և «Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ Սյունիքի արյան կայանը համատեղ դոնորական արյունատվական ծրագիր են մեկնարկել՝ «Հանձնիր արյուն, փրկիր կյանքեր» խորագրով:

Նախաձեռնությունը արյունաբանական կենտրոնինն էր, իսկ ԶՊՄԿ-ն սիրով ընդունել է առաջարկը, և ընկերության բժշկական ծառայությունը հանձն է առել կազմակերպչական աշխատանքները:

Գործընթացն իրականացվել է արդեն 4 էտապով և դեռ շարունակվելու է փուլային տարբերակով՝ մեկ փուլում ներառելով առնվազն 25 անձ:

Ընկերությունը ողջունեց ծրագիրն ինչպես աշխատակիցների շրջանակում հումանիզմի քարոզչության, այնպես էլ դիտարկելով այն որպես հնարավորություն՝ նման նախաձեռնությունների կազմակերպման և ակտիվ մասնակցության մշակույթ ստեղծելու առումով:

Աշխարհի առաջատար ընկերությունների օրինակին հետևելով և հաշվի առնելով ժամանակաշրջանի բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը՝ նման ակցիաները կարևոր են և անհրաժեշտ:

Ծրագրում ընդգրկված են ընկերության բոլոր տնօրինությունների և դեպարտամենտների՝ պահանջվող չափորոշիչներին համապատասխանող աշխատակիցները:

Պետք է նշել, որ ի սկզբանե դրական էր աշխատակիցների արձագանքը: Ակտիվությունը հենց առաջին ակցիայից ընթանում էր պլանավորվածի համաձայն: Բնակավայրերում դոնորների կազմը համալրելու նպատակը՝ ՀՀ թիվ 1 հարկատուի ներգրավմամբ, իրատեսական էր արդեն իսկ:

2023 թ. սեպտեմբերին կազմակերպված ակցիայից հետո արյունաբանական կենտրոնի տնօրեն Արթուր Առաքելյանից շնորհակալական նամակ ուղղվեց ԶՊՄԿ՝ ակտիվ համագործակցության համար. հավաքագրված արյան բանկը ծառայել էր նպատակին:

Ընկերության բժշկական ծառայության համակարգող Տրդատ Գրիգորյանի խոսքով՝ ծրագիրը կորպորատիվ պատասխանատվության մաս է կազմում, և նման քայլերը տանում են դեպի Կորպորատիվ դոնորություն:

Նշենք նաև, որ ունենք ծրագրին կրկին մասնակցելու ցանկությամբ աշխատակիցներ, իսկ վերջերս կայացած չորրորդ ակցիան կազմակերպվել էր ազդակիր Արծվանիկ համայնքում, հիմնականում՝ արծվանիկցի աշխատակիցների ներգրավմամբ:

ԱՔԱՆԱՎՈՐԻՐ QR ԿՈԴԸ՝ ԻՄԱՑԻՐ ԱՎԵԼԻՆ:

Քաջարանքում էր «Բոհեմ» թատրոնը

Դերասանական կազմն այցելեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, շրջեց բացահանքում: Դերասանները շատ էին լսել արդյունաբերական հսկայի մասին, վաղուց էին ուզում տեսնել դրա իրական ծավալները: Դերասաններից մեկը՝ Լեռնիկ Հարությունյանը կիսվեց տպավորություններով.

– Հանքում շրջելիս, ինձ թվաց՝ ինչ-որ ֆիլմի կամ նկարի մեջ եմ: Շրջեցինք, մի քանի գործողությունների ծանոթացանք, ինչը շատ հետաքրքիր էր: Կարծում եմ, այնտեղից շատ բան վերցրի և կտանեմ ինձ հետ:

Դերասանների համար ուշագրավ էր նաև մշակույթի պալատը՝ իր տեսքով ու կառուցվածքով: Նման շինություններ ամեն տեղ չես տեսնի:

– Հիացած եմ դահլիճով, ամեն ինչ մաքուր ու գեղեցիկ է: Թե՛ տեխնիկապես, թե՛ որակապես, նման թատրոններ շատ քիչ կան Երևանում: Ողջունելի է, որ մարզերում մշակույթը գնալով զարգանում է, – նշեց դերասան Անդրանիկ Հարությունյանը:

Մարզային շրջագայության շրջանակում դերասանները քաջարանցիների դատին հանձնեցին «Անփորձանք գիշեր» ներկայացումը:

Աննա Մելքումյան

Ապրիլի 22-ը նշվում է որպես երկիր մոլորակի օր: ԶՊՄԿ բնապահպանության բաժնի աշխատակիցներն այդ առիթով Կապան համայնքի Վանեք բնակավայրում էին:

Դրանք Աճանանի ու Օխտարի միջնակարգ դպրոցների աշակերտներին պատմեցին շրջակա միջավայրը պահպանելու կարևորության մասին, ապա ծանոթացրին ծառ տնկելու նորարարական մեթոդներին՝ մասնավորապես, հիդրոգել նյութին: Այն հինգ տարի անընդմեջ խոնավություն է հավաքում շրջակայքից, անհրաժեշտության դեպքում փոխանցելով բույսին, նաև պարունակում է ծառին անհրաժեշտ հանքանյութեր: Օխտարի դպրոցի աշակերտուհի Աննա Ավանեսյանը տպավորված էր.

– Մենք հնարավորություն ունենք վայելելու հրաշալի բնությունը: Շատ կարևոր է կարողանալ այնպես անել, որ մեզանից հետո եկող սերունդներն էլ մեր տնկած ծառերի ստվերում նստեն:

Այդ օրը տնկվել է 48 միավոր թուփ, ծառ ու ծաղիկ, 60 քառակուսի մետր տարածքում կատարվել է սիզամարգի սերմի տարածում: Աշնանը Վանեք բերող ճանապարհի աջ ու ձախ կողմերում տնկվելու է 180 միավոր կանադական բարդի: Նորատունկ ծառերի ու թփերի մասին հոգ են տանելու Վանեքի վարչական ղեկավարն ու աշխատակիցները: Նրանք այդ պատասխանատվությունը ստանձնում են սիրով և խոստանում՝ երեխաների տնկած ծառերը հնարավորինս լավ խնամել: Վարդի թփերը կգեղեցկացնեն Վանեքի վարչական շենքի բակը, իսկ բարդիները թույլ չեն տա, որ գոնե այս հատվածում հողը շարունակի սահել:

Տիգրանուհի Բաղալյան

ԱՊՐԻԼԻ 22-Ը ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՕՐ

Հոգևոր երաժշտությունը հասկանալով՝ մենք է՛լ ավելի մոտ կարող ենք լինել Աստծուն...

Հոգևոր երգերը բազում ունկնդիրներ ունեն, սակայն քչերն են հասկանում երգի բուն իմաստը:

Հայ իրականության մեջ հոգևոր երաժշտությունը ձևավորվել է 4-5-րդ դարերում: Քրիստոնեության ընդունումից հետո հայ եկեղեցական երաժշտությունը լայն տարածում գտավ ժողովրդի շրջանում: Եկեղեցի այցելելով, պատարագների և արարողությունների ժամանակ մարդիկ ունկնդրում էին երաժշտություն, նույնիսկ երգում, սակայն հաճախ չհասկանալով երգի և բառերի իմաստը:
Հայ եկեղեցու հոգևոր երաժշտությունը մեկնաբանելու և ժողովրդին առավել հասկանալի դարձնելու համար Քաջարան համայնքի հոգևոր հովիվ Տեր Շիրակ քահանա Խանոյանը և Քաջարանի Մշակույթի պալատը համատեղ ծրագրով հանդես եկան:
«Հայ եկեղեցական մշակույթը շարունակում է մնալ չբացահայտված և չուսումնասիրված: Թվում է, թե դասական անունների և փոքր ինչ մեկնաբանված շարականների կողքին ավելացնելու ոչինչ չկա: Սակայն բավականին հարուստ և նշանակալի է մեր հոգևոր երգերի պատմությունը: Հենց այս նպատակով, այսօր առաջին անգամ հանդես ենք գալիս հոգևոր երգերի, կարելի է ասել՝ բացատրությամբ և մեկնաբանությամբ» – նշեց Տեր Շիրակ քահանա Խանոյանը:

> *«Ողջունելի է, որ մարդիկ հետաքրքրվում են եկեղեցական երաժշտության պատմությամբ: Այս նախաձեռնությունը շարունակական է լինելու, քանի որ իր մեջ ուսուցողական տարրեր է կրում»:*

Հայկական քանոնի գեղեցիկ հնչյուններով՝ մասնակիցները վայելեցին եկեղեցական շարականներ, տաղեր և կոնդակներ: Քաջարանի հոգևոր հովիվը մանրամասնորեն ներկայացնում էր յուրաքանչյուր երաժշտության պատմությունը, բացատրում էությունը և պատասխանում մասնակիցներին հուզող հարցերին:
«Ողջունելի է, որ մարդիկ հետաքրքրվում են եկեղեցական երաժշտության պատմությամբ: Այս նախաձեռնությունը շարունակական է լինելու, քանի որ իր մեջ ուսուցողական տարրեր է կրում: Հոգևոր երաժշտությունը հասկանալով՝ մենք է՛լ ավելի մոտ կարող ենք լինել եկեղեցուն և Աստծուն», – նշեց քահանա Խանոյանը:

Թամարա Ավանեսյան

Ընկերական խաղ՝ Զանգեզուր-Ագարակ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արհեստակցական կազմակերպության նախաձեռնությամբ կայացավ միջարտադրամասային վոլեյբոլի առաջնությունը: Զանգեզուրի կոմբինատից ներգրավված էր 7 արտադրամասի թիմ: Ընկերական խաղի ժամանակ հանդիպեցին Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների աշխատակիցները: Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Ալեքսանդր Բեյլաևը նույնպես մասնակցեց առաջնությանը: Ողջունելով նման միջոցառումների կազմակերպումը՝ նշում է. *«Շնորհակալ եմ հրավերի համար: Վաղուց մեր թիմը նման մրցույթների չէր մասնակցել: Բոլորի տրամադրությունը լավ է, խաղը՝ հետաքրքիր: Սա շատ լավ առիթ է, կցանկանայի հաճախ հանդիպենք, բայց որ ամենակարևորն է՝ հանդիպումներն անցկացնենք առանց վնասվածքների»:*

Թեժ պայքարում հաղթող ճանաչվեց ՀՊՄԿ մարզահամալիրի թիմը: Երկրորդ տեղում Ագարակի կոմբինատը, իսկ երրորդում՝ ՀՊՄԿ-ի հարստացուցիչ ֆաբրիկայի թիմը: Առաջատարներն արժանացան պատվոգրերի, գավաթների, մեդալների և դրամական պարգևների:

Աննա Մելքումյան

Թեժ պայքարում հաղթող ճանաչվեց ՀՊՄԿ մարզահամալիրի թիմը: Երկրորդ տեղում Ագարակի կոմբինատը, իսկ երրորդում՝ ՀՊՄԿ-ի հարստացուցիչ ֆաբրիկայի թիմը:



ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՐԳՎՈՒՄ ԵՆ ԸՍՏ ՏԵՍԱԿԻ

A — Class A

Սովորական այրվող նյութերի հրդեհների համար, ինչպիսիք են փայտը, թուղթը, կտորը, աղբը և պլաստմասսան:

B — Class B

Դյուրավառ հեղուկներ, ինչպիսիք են քսուքը, բենզինը և յուղը՝ բռնկվող հրդեհների դեպքում:

C — Class C

Էլեկտրական սարքավորումների հրդեհների դեպքում, ինչպիսիք են շարժիչները, տրանսֆորմատորները և սարքերը:

D — Class D

Այրվող մետաղների, օրինակ՝ կալիումի, նատրիումի, ալյումինի և մագնեզիումի հրդեհների դեպքում:

K — Class K

Կերակուր պատրաստելու յուղեր և այլ յուղեր, օրինակ՝ կենդանական և բուսական ճարպեր պարունակող հրդեհների համար:

Կրակմարիչների ամենատարածված տեսակներն են.

Ջրային կրակմարիչ. Ջրային կրակմարիչները մարում են կրակը՝ հեռացնելով կրակի եռանկյունու ջերմային տարրը: Դրանք օգտագործվում են միայն A դասի հրդեհների համար:

Չոր քիմիական կրակմարիչ. Չոր քիմիական կրակմարիչները մարում են կրակը՝ ընդհատելով հրդեհի եռանկյունու քիմիական ռեակցիան: Դրանք առավել արդյունավետ են A, B և C դասի հրդեհների դեպքում:

CO2 կրակմարիչ. Ածխածնի երկօքսիդի կրակմարիչները հեռացնում են կրակի եռանկյունու թթվածնային տարրը: Դրանք նաև հեռացնում են ջերմությունը՝ սառը արտանետումով, և կարող են օգտագործվել B և C կարգի հրդեհների ժամանակ:

Եվ քանի որ բոլոր հրդեհները տարբեր կերպ են «սնվում», կան կրակմարիչներ՝ կախված կրակի տեսակից: Որոշ կրակմարիչներ կարող են օգտագործվել մեկից ավելի դասի կրակի դեպքում, իսկ մյուսները զգուշացնում են հատուկ դասի կրակմարիչների օգտագործման դեմ:

ԵԹԵ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՔ ԿՐԱԿՄԱՐԻՉ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ





Քաշեք պտուկը, ուղղեք վարդակը կամ գուլպանը կրակի հիմքում, սեղմեք գործառնական մակարդակը, որպեսզի մարման միջոցը լիցքաթափվի, և ծայրը կամ գուլպանը ավելեք մի կողմից մինչև կրակը մարվի: